ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 127. Կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին տարեկան զեկույցը ներկայացնելը և քննարկելը

1. Կառավարությունը յուրաքանչյուր տարի՝ մինչև մարտի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարում իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց:

2. Ազգային ժողովի նիստում զեկույցը քննարկվում է Կանոնակարգի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հետևյալ տարբերությամբ.

1) զեկույցը ներկայացնելու համար վարչապետին հատկացվում է մինչև մեկ ժամ.

2) հարակից զեկուցմամբ կարող են հանդես գալ բոլոր մշտական հանձնաժողովների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև վարչապետի ներկայացմամբ՝ Կառավարության մինչև երեք անդամ, որից հետո նրանց կարող են հարցեր տրվել.

3) եզրափակիչ ելույթի համար վարչապետին հատկացվում է մինչև 30 րոպե:

Հոդված 127.1. Պետության արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերի վերաբերյալ զեկույցները

1. Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 20 օրվա ընթացքում՝ արտաքին գործերի նախարարը, իսկ վարչապետը՝ յուրաքանչյուր տարի երկու անգամ՝ մինչև դեկտեմբեր 1-ը և հունիսի 1-ը Ազգային ժողով զեկույց են ներկայացնում Հայաստանի Հանրապետության անվտանգության, պաշտպանության և արտաքին քաղաքականության համար ռազմավարական նշանակություն ունեցող հարցերում ընթացող գործընթացների, դրանց շրջանակներում վարվող բանակցությունների և ձեռք բերված կամ հնարավոր պայմանավորվածությունների առանցքը կազմվող հիմնարար դրույթների վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան ներկայացված զեկույցը քննարկվում է արտաքին քաղաքականության, պաշտպանության և անվտանգության բնագավառներում իրավասու մշտական հանձնաժողովների համատեղ փակ նիստում՝ առանց որևէ փաստաթղթի ընդունման:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված զեկույցում առկա տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց պաշտպանության հետ

կապված հարաբերությունները կարգավորվում են համապատասխան օրենքով: Պատգամավորներն այդ տեղեկություններին կարող են ծանոթանալ օրենքով սահմանված կարգով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված զեկույցը Ազգային ժողովի պատգամավորների մեկ քառորդի պահանջով մեկամսյա ժամկետում՝ Խորհրդի սահմանած օրը, քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստերում՝ Կանոնակարգի 126-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

5. Սույն հոդվածով նախատեսված խորհրդարանական վերահսկողության առարկային վերաբերող հարցերի պարզաբանման առնչությամբ իրավասու մշտական հանձնաժողովի կամ Ազգային ժողովի որոշմամբ կարող են հրավիրվել իրավասու պաշտոնատար անձինք, որոնք պարտավոր են ներկայանալ հանձնաժողովի կամ Ազգային ժողովի նիստին և պատասխանել հարցերին:

Հոդված 128. Գլխավոր դատախազի հաղորդումը ներկայացնելը և քննարկելը

1. Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության նախորդ տարվա գործունեության մասին:

2. Ազգային ժողովի նիստում հաղորդումը քննարկվում է Կանոնակարգի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ գլխավոր դատախազի ներկայացմամբ: